ՅՈՒՆԻԲԱՆԿ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Թողարկողի անվանումը՝ **«Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերություն**:

«Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից թողարկվող պարտատոմսերի առաջին տրանշի հիմնական պայմանները	
Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Արժեթղթերի ձևը	Ոչ փաստաթղթային
Մեկ արժեթղթերի անվանական արժեքը	100 ԱՄՆ դոլար (նվազագույն քանակը՝ 10 հատ, այսինքն պարտատոմսի ձեռք բերման համար գնման նվազագույն ծավալը 1000 ԱՄՆ դոլար)
Արժեթղթերի քանակը	50 000 հատ
Մեկ թողարկման ընդհանուր ծավալ	5 000 000 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամուտ (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք)	Տարեկան 8%, որը կհաշվարկվի սկսած թողարկման և տեղաբաշխման օրվան հաջորդող օրվանից:
Արժեկտրոնային եկամուտների վճարում	Եռամսյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	24 ամիս
Թողարկման ամսաթիվ	08.04.2016թ.
Տեղաբաշխման ժամկետ	08.04.2016թ.-14.06.2016թ.
Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռքբերել «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ տեղաբաշխման ավարտից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում (ցուցակումից հետո) մասնավորապես «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի առևտրային հարթակում:	
Պարտատոմսերը ձեռքբերելու համար անհրաժեշտ է արժեթղթերի և բանկային հաշիվներ բացել, համապատասխանաբար , «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ –ում և «Յունիբանկ» ԲԲԸ –ում: «Յունիբանկը» հանդիսանում է Հաշվի օպերատոր, հետևաբար բոլոր հաշիվները հնարավոր կլինի բացել հենց բանկում:	
«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի	

համաձայն, բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:
Պարտատոմսերի մարման ամսաթիվը՝ 08.04.2018թ.:

Ծանուցում

«Յունիբանկ» ԲԲԸ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը և պարտատոմսերի մարումը կիրականացվի հետևյալ ժամանակացույցով.

Արժեկտրոնային եկամուտների առաջին վճարում՝ 08.07.2016թ.

Արժեկտրոնային եկամուտների երկրորդ վճարում՝ 08.10.2016թ.

Արժեկտրոնային եկամուտների երրորդ վճարում՝ 08.01.2017թ.

Արժեկտրոնային եկամուտների չորրորդ վճարում՝ 08.04.2017թ.

Արժեկտրոնային եկամուտների հինգերորդ վճարում՝ 08.07.2017թ.

Արժեկտրոնային եկամուտների վեցերորդ վճարում՝ 08.10.2017թ.

Արժեկտրոնային եկամուտների յոթերորդ վճարում՝ 08.01.2018թ.

Արժեկտրոնային եկամուտների ութերորդ վճարում՝ 08.04.2018թ.

Արժեկտրոնային եկամտի, ինչպես նաև մարման գումարը վճարվում է վճարման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ կազմված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա «Յունիբանկ» ԲԲԸ-ում՝ պարտատոմսերի անվանական արժեքին հավասար գումարները ներդրողների բանկային համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով:

Պարտատոմսերի և Բանկի մասին առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ Պարտատոմսերի թողարկման Ազդագրում:

Ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցվել է 02.04.2016թ.-ին N1/204A որոշման համաձայն (ուժի մեջ է մտել 03.04.2016թ-ից):

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում (ք.Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5) և մասնաճյուղերում (հասցեները տես բանկի ինտերնետային կայքում՝ www.unibank.am), իսկ էլեկտրոնային պատճենը՝ «Յունիբանկ» ԲԲԸ-ի ինտերնետային կայքում՝ www.unibank.am: